սայլերի առանցքները սապնելու համար, որ տարածված էին միայն այնտեղ, որտեղ բանում էին սայլերը։ Չկան նաև Հարևան Մեղրու շրջանում կարկէծից՝ դդումից շինած և բազմազան նպատակների հատկացված ամաններ։

Երբ կավե, պղնձե կամ փայտե ամանը շունը լիզելով կամ մուկը մեջ ընկնելով կամ այլ պատճառից պղծվում էր, հարամվում էր, զանգեզուրցին ամանը ճըլալըմ էր մէռնաճռւրավ՝ մեռոնի ջրով։ Դրա համար կամ եկեղեցուց բերում էր օրհնած ջրից, կամ տանը խմորի մեջ պահած մէռնաճռւրից։ Մանուկը մկրտելուց հետո մնացած մեռոնաջրով խմոր էին անում, խմորը չորացնում և մի քսակի մեջ ղարադամի սյունից կախում։ Հարկ եղած ժամանակ այդ խմորից կինը մի պատառ բաց էր անում ջրի մեջ և այդ ճռւրավ ըմաճը ճըլալըմ։ Երբեմն այդ նպատակով բաց էին անում ջրի մեջ եկեղեցուց բերած նըշխարքը։